



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԲՂԵՆՈ ՆՈՐԱՎԱՆՔ¹

Արձանագրության մեջ հիշված Գրիգոր արքան Գրիգոր Երկրորդ թագավորը (Սենեքի որդին) լինել չէր կարող, որովհետև դա ապրում էր 12-րդ դարում, Սյունյաց թագավորության անկման շրջանում, և վախճանվել է 1166 թվականին, այսինքն եկեղեցու շինությունից 100 տարուց ավելի հետո:

Գալով արձանագրության մեջ հիշված երկրորդ պատմական անձին՝ Սյունյաց Հովհաննեական կոպուսին, հարցը բարդանում է, որովհետև արձանագրության և Ստեփանոս Օրբելյանի տվյալներն իրար չեն համապատասխանում: Սյունյաց պատմիչն իր պատմության Կ գլուում (էջ 321) գրում է. «Իրրեկ կասարեցան երանելի մետրապօլիսն Սիմեաց Տէր Ցովհաննէս, ապա աստուածապսակ թագաւորն Սմբատ ընտրէ այր մի պատշաճաւոր, վկայեալ յամենեցունց, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և լի գիտութեամբ Գրիգոր անուն, յուղարկէ առ կաթողիկոսն Հայոց յԱնի և տայ ձեռնադրել զնա եպիսկոպոս Սիւնեաց»:

Ուրեմն, ըստ պատմագրի, գեռ Սմբատի օրոք Հովհաննես եպիսկոպոսը վախճանվել էր և եպիսկոպոսական աթոռն էր գրավել նրա հաջորդը՝ Գրիգոր եպիսկոպոսը, որը պաշտոնավարել է 58 տարի (սա այն Գրիգոր եպիսկոպոսն է, որը կառուցել է Տաթևի վանքի արևելյան դարպասի վրայի Աստվածածնա անվան եկեղեցին):

Սակայն արձանագրությունը պնդում է, որ Բարձրավանի եկեղեցին շինված է Գրիգոր արքայի թագավորության և Սյունյաց եպիսկոպոս Հովհաննու հայրապետության ժամա-

նակ: Որի՞ն հավատալի Թվում է թե նախապատվությունը պետք է տալ արձանագրության և ենթագրել, որ Սյունյաց պատմիչը կարող էր մի քանի տարով սխալվել, երբ գրում էր իրենից 220 տարի առաջ եղած անցուարձի մասին, մանավանդ, որ այդ շրջանի պատմական դեպքերի և շինարարության թվականները հաճախ չի բերում: Հավանաբար Ստեփանոս Օրբելյանն իր պատմությունը գրելիս ձեռքի տակ չի ունեցել հիշյալ արձանագրությունը, եթե ոչ նա, բայց իր սովորության, պատմության մեջ կրերեր դրա բովանդակությունը: Եթե մեր եղբակացությունը ճիշտ է, ուրեմն պետք է ընդունել, որ այդ եկեղեցին շինված է Հովհաննես եպիսկոպոսի կյանքի վերջին տարիներին և որ Գրիգոր եպիսկոպոսը Սյունյաց միտրոպոլիտների աթոռը գրավել է ոչ թե Սմբատի, այլ նրա եղբայր Գրիգոր արքայի թագավորության օրոք:

Այժմ գառնանք մյուս կարեռը հարցին — ի՞նչ է եղել այդ հուշարձանի անունը: Քանի որ մեր ձեռքի տակ եղած արձանագրությունների մեջ այդ ուստի անունը չի հիշվում, մնում է դիմել գրական աղբյուրներին:

Առաջնորդվելով Ալիշանի «Սիսական»ին կցված քարտեղով, որի մեջ մեզ հետաքրրող երկրամասը դրված է Սյունյաց երկրի հին Բաղր գավառում, քննության առանք այդ գավառում հիշվող, անեղագրությամբ անհայտ հուշարձանները: Ալիշանը «Սիսական»ի 278 էջում, Ղաթթարի կամ Կատարո պղնձահանքերի մասին իր նյութը շարահարելով գրում է. «Թուի ի հարաւոյ սորին և ի թիկունս լերին անջրպետի ձորոց Զանգուրի և Կապանի գոլ միւս ևս վանաց Նորավանք կոչեցելով»: Այնուհետև նա բերում է Ստեփանոս

1. Շարունակված ամսագրի 1952 թվականի մարտի և ապրիլի համարներից:

Օրբելյանի պատմությունից նույնությամբ Խէ դիմի բովանդակությունը, որի վերնագիրն է «Վասն շինութեան նորավանից որ ի գաւառին Բղենոյ»: Առաջին հայացքից զարմանալի կթվա, թե ի՞նչ կապ կա Կատարով վանդից հարավ ենթարդրվող և փաստորեն դրանից հուշախոս գտնվող հուշարձանների մեջ: Այսպիսի ուշի-ուշով քննելով պատմագրի այդ վանքի մասին տված տեղեկությունները, հկանք այն համոզման, որ այդտեղ խոսքը վերաբերում է մեզ հետաքրքրող հուշարձանին:

Նախքան այդ եզրակացությունն ապացուցելու նպատակով պատմագրի հիշատակությունը մեջ բերելը, աշխատենք որոշել Բղեն գավառի տեղը, որովհետև մեզ հետաքրքրող հարցը բարդանալով, դառնում է մի խնդիր երկու անհայտով և բացի այդ, մնում է նաև Ալիշանի հակառակ կարծիքը, հուշարձանի ննիքարձական տեղի մասին:

Ակսենք խնդրի միջի երկրորդ անհայտի լուծումից:

Ի՞նչ են ասում մեր բանասերները Բղեն գավառի և նրա տեղադրության մասին: Ալիշանը «Ախսական»ի 278 էջում գրում է, «Ոչ ուրեք այլ յիշի գաւառ յայս անոն, այլ դոկ մի ի Հարանդ գաւառի և Բղենոյ բերդ, որոյ գաւառն ոչ նշանակի, յիշի Բղեն և այլ ուրեք ուրեք, սակայն դիրք դոցին ոչ ի միում վայրի թուին, զի շուրբ Բղենոյ թուի լինել հարաւագոյն ևս քան գտեղագրեալս վայր, իսկ զուրն Զագեծորոյ որ ընդ մէջ սահմանաց Սղկայ և Հարանդու մերձ ինքեան ցուցանէ զթղեն ընդ Բորոտնայ, ըստ որում զոյգ յիշի և այլուր» և այլն:

Փորձենք պարզել, թե ի՞նչ է հասկացվում այս խրթին նախադասությունից, Բղեն անվան նկատմամբ.—

1. Ուրիշ տեղ (բացի Ստեփանոս Օրբելյանի պատմությունից) Բղեն գավառ չի հիշվում, որով կարծեն կասկածի տակ է դրվում այդ անոնմով գավառ լինելու փաստը, որովհետև իր մտքի շարահարության շարունակության մեջ նա այլև այդ հարցին չի վերագրում:

2. Հիշվում է Բղենո բերդ, որի ո՞ր գավառում լինելը հայտնի չէ:

3. Բղեն բերդը հիշվում է Բորոտնա բերդի հետ միասին:

Այս խնդրի առթիվ Խնձիճյանը իր «Ատորագրութիւն հին Հայաստանեալց»ի 259 էջի ծանոթթյան մեջ գրում է, «Եղ գաւառին Բղենոյ, իսկ Բղեն թուի լինել ի Բաղաց գաւառունու»:

Երկու բանասերներն եւ որոշակի հայտնում են, որ Բղեն գավառի տեղը հայտնի չէ,

իսկ դրանցից հնձիճյանը ենթադրում է, որ Բղեն գավառը Բաղաց գավառի մեջ պետք է լինի:

Այժմ դառնանք Բղեն ըերդի տեղադրության հարցին, որի անոնմով կարող էր կոչվել և այդ գավառը, կամ ընդհակառակը, զավարում անունով բերդը²:

Այս հարցի առթիվ որոշ լուսաբանություն մենք գտնում ենք Օրբելյանի պատմության ԿԶ գլուխում—էջ 411-ում, — որտեղ պատմելով Սմբատ Օրբելյանի մասին, զրում է. «Էաու և թափեաց զերկիրն Որոտան բովանդակ մինչ ի սահմանն Բորոտնայ և Բղենոյ, յորում և կայր ընդաւեր աթոռն Սիմենաց Տաթև»:

Այստեղ պարզ է, որ «Որոտան երկիր» ասելով պատմիչը հասկանում է Որոտան զետի հովտում գտնվող մի երկրամաս, որի մեջ գտնվում էր Տաթևի շանքը, Սյունյաց աթոռը և բացի այդ, Բորոտնա և Բղենոն բերդը ցուց են տրվում իբրև վերջին սահման, որին հասնում է Սմբատ Օրբելյանը, զետի հոսանքով առաջ զնալով, իր նվաճումների ժամանակ:

Մեզ այստեղ հետաքրքրողն այն է, որ այսպիսով որոշվում է Բղեն բերդի մոտավոր տեղը, այսինքն՝ որ նա գտնվում է Որոտան զետի հովտում Տաթևից ցած և հավանաբար այն բերդերից մեկն է, որոնց ավերակները այժմ մնում են այլ զետի ափին, Գորիսի գետակի խառնարանի մոտերքում: Հետևաբար եթե ընդունենք, որ Բղեն բերդը և Բղեն դավառ կապ ունեն իրար հետ, այսինքն, որ բերդը գտնվում է համանուն գավառի մեջ, դրանից հետեւի, որ Բղեն գավառը գտնվում է Որոտան զետի միջին հոսանքում և Բաղրում, որով կհաստատվի Խնձիճյանի հնթագրությունը և այդ գավառը կտեղավորվի Բաղրի հյուախային մասում:

Այսպիսով, որոշելով Բղեն գավառի տեղը, մենք տեսնում ենք, որ Գորիսի ավերածանը գտնվում է նույն այն գավառում, ինչպես և Բղեն նորավանքը, որի մասին պատմիչը խոտում է եւ գլխում:

Այժմ բերենք պատմագրից Խէ գլխի բովանդակությունը, թեթև կրծատումներով, ընդգծելով այն տեղերը, որոնք կարող են իրեն ապացուց ծառայել Գորիսի ավերածորի հուշարձանի և Բղենո նորավանքի նույնության:—

«Երանելի սովոր Հօրին Գէորգայ էր հարազատ մանկիկ մի ի նոյն Սիսական տոհմէ Սիեփիաննու անոն, զոր հատեալ յստենէ ծնողացն ոնփերեցին Աստուծոյ, և ետուն

2. Խնձես օրինակ Բաղաբերդ, Երմակաբերդ և ալլուն:

յուառամ մանկութեան առ ոտս ոստուածարեալ ծերոց, որ և սնեալ զարգացաւ ամենայն կատարելութեամբ ներքին մարդուն և արտաքին, գիտնականան և գործնականան. և կոչեցաւ յաստիճան քահանայութեան ի Տէր Յովիշաննիսէ՝ Սիհնեաց եպիսկոպոսէ: Ապա ցանկացեալ այնուհետեւ աստուածային իմբն գործոյ՝ կամեցաւ շինել եկեղեցի և հաստատել ի նմա տուն կրօնաւորաց և դասս պաշտօնէից... գնացեալ ապա ի բիկանց կուաէ Կատարոյ վանից. և գտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ և վայելուզ՝ ի մէջ Երկու ձորոց ի վերայ հարը ոստոյ միոյ, սկսանի շինել եկեղեցի օժանդակութեամբ Հրահատայ իշխանի, և կատարէ զնա, և այլ ևս զափիս և սրան եկեղեցւոյն և ընակութիւն կրօնաւորաց:

Եւ կոշեալ ի նաւակատիս զՏէր Յակոր՝ Սիհնեաց եպիսկոպոս, սահմանեն զնա եղայրանոց, և զվայրն ամենայն ջրշակայ՝ ժառանգութիւն եկեղեցւոյն, և զնեն դողետունս հանդէա վանիցն. և ժողովեալ ուրուկս րազումս անդ դարմանէին, և այսպէս պայծառացուցեալ ամենայն ուղասուք և կարգաւոր զվանսն յՅ85 թուականին Հայոց. ինքն երանելին և անհամեմատն ի մարդկանէ Ստեփաննոս կեցեալ բազում ամս... փոխի յիմանալի կայանս ի կարգս հրեշտակաց... ի 419 թուականին Հայոց... և զնի ի քնարանի առ սուրբ եկեղեցւոյն: Եւ յացորդէ զառաջնորդութիւն ովստին նորավանից հայր Հրահատ, և յետ նորա եղորորդի նորին Ստեփաննոսի Քրիստափոր՝ աշակերտ սուրբ Հօրն յամենայնի նմանեալ վարդապետին իւրոյ:

Բայց յետ սակաւոց և շինեցաւ եկեղեցի յոյժ գեղեցիկ յօրինուածօֆ, և ի դրան կամարք զարմանալիք ի սեանչելի նարտարաց յարմարեալ մեծամեծ վիմօֆ և խարսխաւոր սեամբք ի հայր Գէորգայ և ի Յովհաննիսէ՝³ (էջ 245—246):

Այս քաղվածքում մեր ուշադրությունը դրավող առաջին կարեսր հրեշտակությունը վանքի տեղադրությանն է վերաբերում: Պատմիչը հայտնում է, որ այն տեղը, որն ընարում է Ստեփաննոս իր եկեղեցին կառուցելու համար, գտնվում էր Կատարո վանքի թիկունքի կողմում: Ալիշանը ենթադրում է, որ վանքի թիկունքը նրա հարավային կողմը պետք է համարել: Այս ենթադրությունը մի քիչ տարօրինակ է, որովհետեւ, սովորաբար, մեր եկեղեցիների հարավային կողմը ամենազարդարուն ճակատ-

^{3.} Ալշանի քաղվածքի մեջ հիշվում է «Ի Յովհաննէ բահանականայէ», «Սիսական», էջ 278:

ներից է, իսկ ընդհակառակը, հյուսիսային կողմն է ամենից քիչ զարդարված, դրա վրա համեմատաբար ալելի քիչ ուշադրություն է դարձվում և հաճախ այդ կողմը նույնիսկ դուռ ու պատուհան չի ունենում, հետևաբար ավելի հարմար է թիկունք կոչվելու: Թիկունքը բարի այս բնորոշումով թղենո նորավանքի տեղը կը նկնի Կատարո վանքից հյուսիս և կհամապատասխանի Բարձրավանի (Երիցաթումբի) վանքի տեղին:

Տեղագրության մասին պատմիչը մի այլ շատ արժեքավոր մանրամասնություն էլ է տակիս, ասելով, որ Ստեփաննոսն ընտրում է երկու ձորերի մեջ ընկած մի շատ գեղեցիկ և վայելու տեղ, մի հարթ սատի (պետք է հասկանալ լեռան սատի) վրա:

Նկարագրելով Դժոխվածորի վանքի տեղագրությունը, մենք ասացինք, որ դա գտնվում է Որոտնա ձորի աջ ափի մի խոր գոգավորության մեջ լեզվակածն երկարող լեռնաբազկի վրա: Ուգեմն պատմիչի նկարագրությունն այս կետում էլ համապատասխանում է Դժոխվածորի վանքի տեղագրության, եթե նույնիսկ ուշադրության շառներ «Ճոյժ գեղեցիկ և վայելու» որակումը, որը միանդամայն տեղին լինելով այդ վանքի բնական դիրքի նկատմամբ, կարող է կարենոր շհամարվել, իբրև սովորական դարձվածք և վանքերից շատ շատերի տեղագրության համար գործ ածվող որակում:

Երկրորդ կարենոր հիշատակությունը, որն անում է պատմիչը, վերաբերում է նորավանքի կառուցվածքի նկարագրությանը: Ստեփաննոսի շինած եկեղեցին ուներ գավիթներ և սրաններ. Դժոխվածորի հուշարձանն է, ինչպես վերևն հիշեցինք, ունի գավիթ և ձարավից ու հյուսիսից սրաններ: Մնում է «գավիթ» հոգնակի ձեզ: Նկարագրության բաժնում հիշեցինք, որ Դժոխվածորի վանքի գավիթը երեք բաժնամունք ունի, որովհետ հասկանալի կլինի, թե ինչո՞ւ պատմիչը դրանց անվանում է «գավիթներ» և ոչ թե «գավիթ»⁴:

^{4.} Օրբելյանի հիշատակությունը գավիթի և սրանների մասին վերաբերում է Ստեփաննոսի կառուցած շիներն, այնինչ թղենո նորավանքը և Դժոխվածորի հուշարձանը նույնը համարելով, այդ մասերը գրտնում ենք մեզ հասած հայր Գեորգի շինած հուշարձանում: Այս հանգամանքի շուրջ կանգ շինք առնում, համարելով, որ հայր Գեորգը շինքը վերակառուցելիս, նրա կազմությունը թողել է անփոփոխ, որն ինչպես տեսակ սովորական էր Սյունեաց երկրում, բայց այդ, մեզ թվում է, որ պատմիչը վերակառուցված շինքի կազմության մասին չի հիշում, կրկնությունից խոսափելով:

Բղենո նորավանքի կառուցման մասին պատմիլը և զիմի վերջում ուրիշ ուշագրավ մանրամասնություններ էլ է տալիս, ասելով. «Բայց յետ սակաւոց և շինեցաւ եկեղեցի յոյժ գեղեցիկ յօրինուածօք, և ի դրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք և խարըս-խատր սեամբք»: Այս բոլորը նույնությամբ ներկայում ունի Դժոխքածորի հուշարձանը՝ կունի գուան (գավթի) զարմանալի կամար-ները. և՝ խարսխավոր սյուները (գավթի մուտքի երկու կողմից), և՝ մեծ-մեծ քարերը, որոնցով շինված է այդ հուշարձանը, ինչպես այդ մասին իր տեղում նկարագրել ենք:

Երբորդ կարևոր հիշատակությունը, որը մեզ օգնում է Դժոխքածորի հուշարձանի և թղենո նորավանքի նույնությունը հաստա-տելու, շինողներին է վերաբերում: Պատմիլը ասում է, որ եկեղեցին «յետ սակաւոց» կառուցել են (պետք է հասկանալ վերակա-ռուցել են) հայր Գեորգը և Հովհաննես կամ Հովհանն (ըստ Ալիշանի քաղվածքի) քահա-նան: Դժոխքածորի վանքի № ա. արձանա-գրության 7 և 8 շարքերում մենք ունենք՝ «Հայր Գեորգ հրամանաւ Քրիստոսի պատ-հալ թագաւորի կատարեցի շինութեամբ և օրհնեցի», ինչպես տեսնում ենք, թե՛ պատ-միլի նկարագրած թղենո նորավանքի և թե՛ Դժոխքածորի հուշարձանի շինուղը հայր Գեորգ էր կողմում: Սակայն պատմիլն ասում է, որ թղենո նորավանքի եկեղեցու շինողները երկու հոգի էին՝ հայր Գեորգը և Հովհաննես կամ Հովհան քահանան. ապա ի՞նչպես բացատրել, որ Հովհաննեսի կամ Հովհանի անունը չկա արձանագրության մեջ:

Ճիշտ է, շինարարական բնույթ կրող չորս հին արձանագրություններից ո՛չ մեկում էլ Հովհաննես քահանայի անունը չի հիշված, սակայն իրենց աեղում անաղարտ պահված № № զ—ը երեք վիմագրություններն էլ գրված են ուն Հովհաննեսի կողմից, իրու ուղերձ առ Աստված: Մենք այն կարծիքին ենք, որ այդ վերին աստիճանի ճոռոմ արձանագրու-թյունները, այն էլ հուշարձանի ամենից ավելի աշքի ընկնող տեղերում, ուրիշ ոշ որի չէին կարող պատկանել, եթե ոչ շինա-րարության հետ մեծ առնչություն ունեցող մեկի: Հստ երեսութին այդ Հովհաննեսը մի ազնվատոհմ, հարուստ, կավելացնենք, «գիտնական» (դատելով արձանագրություն-ների վերամբարձ ոճից և ինքնաստեղծ խրթին բառերից) մեկն է եղել, թեզնես ար-քայական տան քահանան, որն իր դրամով միայն օժանդակել է համեստ, ռատուսահեալ և «աշխատատր» հայր Գեորգին (կամ Գեոր-

գին) հուշարձանի շինարարության գործում, նրան թողնելով սև ու տանչալից աշխա-տանքը և իրեն վերապահելով աւշի ընկնող տեղերում անմահանալու իրավունքը:

Այսպիսով հետևցնում ենք, որ Դժոխքա-ձորի հուշարձանի մեջ պահվել է նաև նկե-ղեցին շինողներից երկրորդ անձնավորու-թյան՝ Հովհաննեսի անունը:

Մի երկու խոսք էլ ասենք «յետ սակաւոց» բառերի առթիվ, որոնք առաջին հայացքից կարող են անհամատելի համարվել 936 և 1062 թվականների տարբերության, այսինքն 126 տարիների համար ինչպես տեսանք Ստե-փանոս Օրբելյանի պատմության և զիմի քաղվածքից, դրանցից առաջին թվականը Օրբելյանը տալիս է Ստեփանոսի շինած վանքի պարտման համար, իսկ երկրորդը մենք վերցնում ենք հուշարձանի շինարարա-կան արձանագրություններից իրեք վերա-կառուցումը ավարտելու թվական: Կարծում ենք, որ այդ երկու թվականների տարբերու-թյունը և «յետ սակաւոց» խոսքերն իրար հակասել չեն կարող, հետևյալ նկատառու-մով: Հին եկեղեցու հիմնադիր և վանիքի առաջին վանահայր Ստեփանոսն ըստ պատ-մագրի մեռել է 970 թվականին, նրան հա-ջորդել են պատմիլի հայտնած երկու վանա-հայրերը, որոնցից երկրորդը եղել է Ստե-փանոսի եղբորորդին և իր աշակերտ Քրիս-տափորը, եթե ընդունենք, որ Քրիստափորն, ըստ ժամանակի սովորության, հորեղբոր մոտ տրված է եղել «յուազմն մանկութեան» և ուրեմն փոքր հասակում, նրա մահը կա-րելի է ընդունել, միշտ հաշվով, իր հուշեղ-բոր մահվանից 40—45 տարի հետո, ուրեմն մոտ 1010—1015 թվականներին, հետևապես դրանից հետո, մինչև 1062 թվականը, կմնա-գի 47—52 տարի, որն արդեն կարող է հար-մարվել «յետ սակաւոց» բառերին:

Այս բոլոր փաստերն ի մի առած, մեզ թույլ ենք տալիս կարծիք հայտնելու, որ Դժոխքածորի հուշարձանը Սյունյաց պատ-միլ Ստեփանոս Օրբելյանի նկարագրած թղենո գավառի նորավանքն է, որի նախկին շինքի շինարարությունը եղել է Սիսական տոհմից Ստեփանոսի ձեռքով և որը 1062 թվականին վերակառուցել են հայր Գեորգը և Հովհաննես կամ Հովհան քահանան, Սյուն-յաց Գրիգոր Ա. թագավորի հրամանով:

Ստեփանոսի շինած եկեղեցին եղել է սո-վորական տիպի մի վանք, որի կրոնավոր-ները զարդվել են բորոտների բժշկությամբ և խնամքով ու այդ նպատակով վանքի դի-

մաց գողետուն են շինել ։ Բայ երևութին այդ վանքը որևէ պատճառով երկար չի դիմացել ու քանդվել է կամ անշքացել։ Պատմիլը հնի քանդման մասին բան չի ասում։ Առանձին կարդալով թղենո նորավանքի շինարարության պատմության վերջին հատվածը, այն տպավորությունն է ստացվում, որ «յետ սակաւուց» շինած եկեղեցու տեղում կարծես որևէ բան չի եղել և կամ եղածներն երկի այնքան անարժեք մնացրդներ են եղել, որ դրանց քանդման (նորը շինելու համար) և կամ վերակառուցման մասին պատմիլը որևէ խոսքով հիշատակելու կարիք չի գգում. գուցե և հնի քանդման և նրա տեղը նորը շինելու պատճառները, կամ մանրամասնությունները նրան էլ հայտնի չեն եղել։ Համենայն դեպս մի բան պարզ է, որ նոր եկեղեցու շինարարական արձանագրությունը պատմիլը ձեռքի տակ չի ունեցել, որովհետեւ հակառակ դեպքում, ըստ իր սովորության, այդ արձանագրությունը կդներ իր պատմության մեջ և իրոք աղբյուր կօգտագործեր այդ (տես Ա գլուխ, էջ 10) շինության թվականը տալու համար։

ՀԱՎԵԼՈՒՄ

Այս վերին աստիճանի հետաքրքիր հուշարձանի մասին մեր ասելիքը սրանով կվերջանար, եթե 1950 թվին կատարված մաքրման և մասնակի պեղումների հետևանքով երևան զային մի շարք կարելոր տվյալներ, որոնք մի կողմից գալիս են հաստատելու մեր կարծիքն այն մասին, թե Զհաննամ-դարասու վանքն իրոք Սյունյաց պատմիչի նկարագրած թղենո նորավանքն է, իսկ մյուս կողմից որոշ շափով պարզաբանում են հուշարձանի պատմությունը, արված կարելոր վերանորոգումներից մեկի ժամանակը և մասամբ դրա ծավալը։

Ա. 936 թվականի շենքից մեացած հետեւ

Այս աշխատության «Նկարագրություն» գլխում հիշված է նոր հայտնաբերված երկու քարերի մասին, որոնց թվականը ավելի հին է քան հայր Գիորգի շինած հուշարձանը։ Դրանցից մեկը մի գերեզմանաքար է Ն Ի Գ (974) թվագրով, իսկ մյուսը միջակ շափերի մի խաչքար Ն Ղ Թ (1050) թվագրով, երկուսն էլ կրաքարից։

Արձանագրությունների մասին խոսելիս,

5. Թվում է, որ այդ գողետուն առկայությանը պետք է վերագրել Դժոխքածորի սարսափելի համբավը և նրա Զհաննամ-դարասի անունը, որը հնուց ավանդաբար մնացել է մինչև մեր օրերը։

նշել ենք, որ գտնված 10 բեկորների թվում երեք հատը կրաքարի վրա են։

Բացի այդ, գավթի առջև կուտակված հողի և շինաղբի շերտերի միջից, հայտնաբերված են երկու հատ կրաքարի խոյակներ, որոնցից մեկի երեք ճակատներին դեռևս պահպանվել են արտասովոր և շատ գեղեցիկ քանդակների մնացորդները։ Հայտնաբերված են նաև մի քանի այլ շձևավորված քարեր, նույնպես կրաքարից։

Վերը հիշված գերեզմանագրաբերի թվագիրը շատ մոտ է հայր Ստեփանոսի շենքի կառուցման ժամանակին, իսկ խաչքարինը՝ միայն 12 տարով հին է հայր Գիորգի շենքի ավարտման թվականից։

Այս տվյալներից կարելի է եղակացնել հետևյալը.

1. որ իրոք հայր Գիորգի շենքի կառուցումից առաջ, նրա տեղում եղել է մի այլ, ավելի հին շենք.

2. որ այդ շենքը կանգուն կամ կիսականգուն գրությամբ եղել է ովստատեղի դեռևս 1050 թվականին, եթե ոչ ավերված և ամայացած ովստատեղում խաչքար շեին կանգնեցնի.

3. որ հիմնականում նախորդ հուշարձանը շինված է եղել կրաքարից։

Վերջին հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ նախորդ շենքը կրաքարից կառուցված լինելու պատճառով ենթարկվել է խիստ հողմահարման և այդ իսկ պատճառով, կորցնելով իր արտաքին շուքը, քանդվել և վերակառուցվել է բազալտ քարով։ Իշարկե, շի բացառվում, որ շենքը կարող էր իր գոյության վերջին տարիներին ենթարկվել որևէ աղետի երկրաշարժից, որ հաճախ էր տեղի ունենում։ Հայտնատանի լեռնաշխարհի այդ մասում։

Բ. ՎԵՐԱԲԵՐԴՈՂՈՐԾՈՒՅՆՆԵՐԻ մասին

Շինարարական բնույթի արձանագրություններից վերջինը (№ ե.) պատկանում է «վերջին աշխատողներ» Սարգիս երեցին, Գողթնացում և Սարգիս Սվարեցում։ Կարծում ենք, որ դրանք այն վարպետներն են եղել, որոնք 1407 թվականին վերանորոգել են գավթի երկու թևերը։ Մեր կարծիքը հիմնավորում ենք հետեւյալ փաստերով։

1. Բացի այդ հուշարձանի շինարարության վրա գործողներից, որևէ մեկ որի հերք աշխատողը իր անունը չէր փորագրի հուշարձանի վրա։

2. Մեր այն ենթագրությունը, որ այդ երեք վարպետները վերանորոգել են գավթի երկու թևերը, հիմնվում է այն հանգամանքի վրա,

որ արձանագրությունը կրող սալը, որի աջակողմյան վերին անկյունը կորագիծ է կազմում, դրված է եղել գավթի հարավային բաժնի արտաքին կամարակապ խորշի վերելում, աշ կողմից, խորշի կամարի տակ։ Քարը գտնված է հողի տակից ձիշտ արդ տեղի ցածում։

3. Թե իրոք գավթի թևերը հետո են շինվել կամ վերանորոգվել, ապացուցում են մեր հետեւյալ դիտողությունները։

ա) Որքան էլ վարպետորեն է կատարվել այդ վերանորոգումը, այնուամենայնիվ նկատելի է, որ գավթի արևմտյան ճակատի որմանայուների խոյակների ներքին սահմանը կազմող հորիզոնական կիսավանը միևնույն հաստությունը չունի գավթի և նրա թևերի վրա, որովհետև գավթինը քիչ ավելի հաստ է քան թևերինը, որը տեղի չէր ունենա, եթե դրանք միաժամանակ շինված լինեին։

բ) Գավթի մուտքի ձախակողմյան (դիտողի կողմից) անկյունավոր կտրվածքները ծածկող խոյակի ձախ եղբը մոտ 1,5 ար. լայնությամբ տաշված է վերևի մասում։ Որքան էլ որ առաջին հայացքից աննկատելի է այդ, այնուամենայնիվ դա ցուց է տալիս, որ կողքի քարը (ձախից) հարմարեցնելու, թերևս մասսամբ կապելու նպատակով է արված, այն էլ հետո, որովհետև խոյակը կերտող վարպետը չէր փացնի իր ձեռագործը, կողքի քարը հարմարեցնելու նպատակով, այլ հակառակը կաներ։ Հավանական է նաև, որ ոճավորված տերևներ քանդակ ունեցող խոյակների ճակատները գավթի թևերի կողմից տաշված լինեն վերանորոգման ժամանակ։

գ) Հուշարձանի տանիքը բուսականությունից մաքրելուց հետո պարզվեց, որ հարավային սրահի գավթին կից ճակատի վերին շարքի սալերը, որոնք ծածկվել են գավթի այդ թևի տանիքի տակ, սրբատաշ են։ Սըրբատաշ սալի ծալը ներկայումս պարզ երևում է դրական կտորի կողմից, չորս-հինգ մատնաշի բարձրությամբ։ Պատճենը պահպանվել է առաջարկության մեջ և ցանկանալ, որ մեր հնագետ-ճարտարապետները մանրամասնորեն ուսումնասիրեն թեև փոքրիկ, բայց իր գեղեցկությամբ խիստ ուշագրավ և այլ առանձնահատկություններով՝ բացառիկ արժեք ունեցող այս հուշարձանը, որը հայկական ճարտարապետության գլուխ-գործոցներից ու հայ արվեստի պարձանքներից մեկն է և արժանի ավելի մեծ ուշագրության։

նակ շինված լինեին, սրահի արտաքին պատի վերին սալերը սրբատաշ չպիտի լինեին, հետևապես, գավթի թևի ներկայի տանիքը հետագայում է կացված սրահի ճակատին ։

Հիշյալ երեք «աշխատողներ» կատարած վերանորոգությունն արված է մեծ վարպետությամբ և այնպիսի հմտությամբ, որ առաջին հայացքից այդ աշքի շինկնում։

Դժվար է ասել, թե 1407 թվականին միայն գավթի թևերն են վերանորոգվել, թե՝ հուշարձանի մլուս մասերն էլ թե՛ այս և թե՛ դրանից առաջ և հետո կատարված վերանորոգությունների մասին մենք խոսսափում ենք որևէ բան ասել, որովհետև այդ հարցը զուտ մասնագիտական է և կարիք ունի մանրակրկիտ չափումների և ուսումնասիրության։ Այս հարցի և թե մի շարք այլ հարցերի, ի մասնավորի այդ հուշարձանի շինարարության մեջ զանազան ոճերի ազդեցության և նախնական ձևի մասին, որոնք շափազանց հետաքրքիր են հայկական ճարտարապետության զարգացման պատմության համար, պատասխան կարող են տալ հնարան-ճարտարապետները։

Վերջացնելով մեր ասելիքը Բարձրավանի վանքի, կամ, ինչպես մենք ենք հնագրում, Սյունյաց պատմիչի հիշած Բղենո նորավանքի մասին, մնում է ցավ հայտնել, որ մինչև օրս այդ ճարտարապետական գոհարը մնացել է անհայտության մեջ և ցանկանալ, որ մեր հնագետ-ճարտարապետները մանրամասնորեն ուսումնասիրեն թեև փոքրիկ, բայց իր գեղեցկությամբ խիստ ուշագրավ և այլ առանձնահատկություններով՝ բացառիկ արժեք ունեցող այս հուշարձանը, որը հայկական ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկն է և արժանի ավելի մեծ ուշագրության։

6. Հիշյալ, ինչպես նաև «Սրահներ» վերնագրի տակ շարադրված հատվածի վերջում հիշատակված հանգամճները նկատի ունենալով, հավանական ենք համարում, որ 1407 թվականի վերանորոգումից առաջ դավթի թևերը նույնպես կամարակապ բացվածքներ են ունեցել, կենտրոնական մասի նմանությամբ,

